47

ՀԵ 28, Էլմ. 66, Ելից 22

1. Ինչպես բարեկամ է Տերը,
Միշտ մեզի կհամբերե,
Կներե մեր հանցանքները,
Մեր վշտերն ալ կկրե:
Քրիստոնյա՛, արտոնությունդ
Այս է, միշտ բերկրապատար,
Քո ամեն փորձություններդ
Աղոթքով Տերոջը տար:

2. Ծատ անգամ խաղաղությունը,
Ո՞հ, իզուր կկորսնցնենք,
Աղոթքի արտոնությունը
Երբ մոռնանք կամ զանց ընենք,
Մեկը կա՞, որ Հիսուսի չափ
Քեզի ցավակից ըլլար,
Վստահե Անոր, հոգերդ
Աղոթքով Տերոջը տար:

3. Դուն հոգնա՞ծ, բեռնավորվա՞ծ ես,
Սիրելիքդ հեռացա՞ն,
Քու Փրկիչդ քեզ կանչած է,
Ինք կըլլա քեզ ապաստան:
Հիսուսի բաց բազուկները
Ապավեն են փրկարար,
Ծուտ դիմե հոն և ամեն բան
Աղոթքով Տերոջը տար: